Արձանագրություն 3

«ԳՀԱՊՁԲ-ԲՆԱ-ՁԻԱՀ-19/1» ծածկագրով գնանշման հարցման ձևով
բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման գնման
ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստի

Անցկացման վայրը՝ ք.Երևան, Աճառյան 2, «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ, 2-րդ հարկ, 207 սենյակ

Անցկացման օրը՝ 21 նոյեմբերի 2019թ.
Անցկացման ժամը՝ 10:00
Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Անահիտ Ասատրյան
Հանձնաժողովի անդամներ՝	Հասմիկ Թամրազյան
	Արշակ Ասմարյան
	Մերի Գրիգորյան
	Մերի Մարկոսյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Գևորգ Խանոյան

I. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման մասին

(նախագահ՝ Անահիտ Ասատրյան)

Ընդունել ի գիտություն, որ

1.1 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե առաջին տեղն զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ հարցում ուղարկելուց հետո սահմանված ժամկետում (12.11.2019թ.) ստացել ենք եզրակացություն, համաձայն որի մասնակիցները՝ «Խաչպար» ՍՊԸ-ն, «Լեյկո» ՍՊԸ-ն, «Մարգ-ֆարմացիա» ՍՊԸ-ն, «Մեդտեխսերվիս» ՍՊԸ-ն և «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ն չունեն ժամկետանց

հարկային պարտավորություններ և մասնակիցների կողմից ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող:

1.2 Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների ներկայացված փաստաթղթերի գնահատման թերթիկները, համակարգողն ամփոփեց ընթացակարգի մասնակցի հայտի գնահատման արդյունքները, ինչն արտացոլված է ստորև ներկայացված աղյուսակում.

N h/h	**Գնահատման չափանիշը**	**Գնահատման արդյունքը**				
		«Խաչպար» ՍՊԸ	«Լեյկո» ՍՊԸ	«Մարգ-ֆարմացիա» ՍՊԸ	«Մեդտեխսերվիս» ՍՊԸ	«Նատալի Ֆարմ» ՍՊԸ
1.	որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթեր	համապատասխանում է	համապատասխանում է	համապատասխանում է	համապատաս-խանում է	համապատասխանում է
Ընդհանուր գնահատականը		**համապատասխանում է**	**համապատասխանում է**	**համապատասխանում է**	**համապատասխանում է**	**համապատասխանում է**

Հանձնաժողովը որոշեց.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի պահանջների համաձայն, «Խաչպար» ՍՊԸ-ի, «Լեյկո» ՍՊԸ-ի, «Մարգ-ֆարմացիա» ՍՊԸ-ի, «Մեդտեխսերվիս» ՍՊԸ-ի և «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը գնահատել բավարար և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին հայտարարել ընտրված մասնակից՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով.

- N 1 և N 4 չափաբաժինների համար «Մեդտեխսերվիս» ՍՊԸ-ին:
- N 5 չափաբաժնի համար «Մարգ-ֆարմացիա» ՍՊԸ-ին:

- N 6 և N 9 չափաբաժինների համար «Լեյկո» ՍՊԸ-ին:
- N 7 և N 11 չափաբաժինների համար «Խաչպար» ՍՊԸ-ին:
- N 8 և N 10 չափաբաժինների համար «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

II. Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին

(նախագահ՝ Անահիտ Ասատրյան)

2.1 Հանձնաժողովը որոշեց.

ա) ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքել Օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը էլեկտրոնային ձևով գնումների գործընթացի բոլոր մասնակիցներին ուղարկելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը **(22.11.19թ. մինչև 26.11.19թ.)**:

բ) հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

III. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(նախագահ՝ Անահիտ Ասատրյան)

3.1 «ԳՀԱՊՁԲ-ԲՆԱ-ՁԻԱՀ-19/1» ծածկագրով գնանշման հարցման ձևով բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման գնման արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 15:00-ին, հասցեն՝ ք.Երևան, «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի շենքում, Աճառյան, 207 սենյակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները

Հանձնաժողովի նախագահ՝	Ա.Ասատրյան	_____ (ստորագրություն)
Հանձնաժողովի անդամներ՝	Հ.Թամրազյան	_____ (ստորագրություն)
	Ա.Ասմարյան	_____ (ստորագրություն)
	Մ.Գրիգորյան	_____ (ստորագրություն)
	Մ.Մարկոսյան	_____ (ստորագրություն)
Հանձնաժողովի քարտուղար՝	Գ.Խանոյան	_____ (ստորագրություն)